ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ *ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ* ԵՐԿԸ

ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԵԱՆ
armanmaloyan1976@gmail.com

Հայոց կանոնական (եկեղեցական) իրաւունքի յուշարձանների շարքում, որպէս արժէքաւոր իրաւայայտ աղբիւր, իր առանձնայատուկ տեղն ունի հայոց կաթողիկոս (1166-1173) սուրբ Ներսէս Դ. Կլայեցու (Ներսէս Դ. Պահլաւունի, Ներսէս Շնորհալի) *Թուղթ ընդհանրական* երկը:

ԺԲ. դարի նշանաւոր հոգեւոր ու քաղաքական գործիչ, մեծ մտածող, մանկավարժ, բանաստեղծ ու երաժիշտ Ներսէս Շնորհալին հայ մշակոյթի երեւելի, անզուգական ներկայացուցիչ է: Նա մեծագոյն շարականագիր է, դասաւորել ու ամբողջացրել է հոգեւոր երգերի ժողովածուն՝ *Շարակնոց*ը, ստեղծել պատմական պոէմի ժանրը՝ գրելով *Վիպասանութիւն*, *Յիսուս Որդի, Ողբ Եդեսիոյ* պոէմները: Շնորհալին հայ միջնադարեան քնարերգութեան ու արձակի մի շարք նոր ուղղութիւնների հիմնադիրը կամ առաջին ներկայացուցիչն է (չափածոյ պատմութիւն, պատմահայրենասիրական ողբ, պատմական պոէմ, չափածոյ ներբողեան, ուղերձ ու մաղթանք, մանկական բանաստեղծութիւն, մանկավարժական-ուսուցողական բանաստեղծութիւն, հանելուկ): Հայ եւ համաշխարհային հոգեւոր գրականութեան գոհարներից են Շնորհալու «Առաւօտ լուսոյ», «Նորահրաշ պսակաւոր» շարականները, «Հաւատով խօստովանիմ» աղօթագիրքը: Շնորհալու երկերը հարուստ են նաեւ արժէքաւոր փիլիսոփայական դատողութիւններով: Մեծ բարեբախտութիւն է, որ Շնորհալու հեղինակած գրեթէ բոլոր գործերը հասել են մեզ: Նրա արձակ գործերը, ըստ բովանդակութեան, բաժանւում են երեք խմբի՝ հրապարակախօսական, դաւանաբանական թղթեր եւ անձնական նամակներ: Արձակ գործերի առաջնեկն է «Ատենաբանութիւն» վերնագրուած հրապարակախօսական ընդարձակ ճառը, որը Շնորհալին արտասանել է 1166 Ապրիլի 17ին՝ Ծաղկազարդի կամ Արմաւենեաց տօնի օրը, երբ Հռոմկլայում հրաւիրուած եկեղեցական ժողովում իր եղբօր՝ Գրիգոր Գ. Պահլաւունի կաթողիկոսի (1113-66) կողմից հռչակուել է աթոռակից կաթողիկոս[1]: Սակայն Շնորհալու արձակի գագաթը *Թուղթ ընդհանրական* երկն է, որը նորօծ հայոց կաթողիկոս Ներսէս Դ. Պահլաւունու՝ 1166ին տուած անդրանիկ կոնդակն է՝ ուղղուած համայն հայ ժողովրդին: Կիլիկիայի պետութեան եւ իրաւունքի պատմու-

[1] Գրիգոր Յակոբեան, *Ներսէս Շնորհալի*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1964, էջ 71:

թեան իրաւայայտ աղբիւրների թւում աչքի է ընկնում Ներսէս Շնորհալի կաթողիկոսի *Թուղթ ընդհանրական*ը, որը նաեւ իրաւունքի աղբիւրի նշանակութիւն ունի[2]: Թղթում խրատների ձեւով արձանագրուած են բնակչութեան բոլոր խաւերի մարդկանց վարքագծի նորմեր[3]:

«Թուղթ ընդհանրական»ը բաղկացած է երկու հիմնական հատուածից, որոնցից առաջինն ուղղուած է հոգեւոր դասի, իսկ երկրորդը՝ աշխարհիկ դասի ներկայացուցիչներին[4]:

Միջնադարում յաճախակի արծարծուող հիմնախնդիրներից մէկը՝ հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութիւնների գերակայութեան կամ առաջնայնութեան հարցը, Շնորհալին լուծում է յօգուտ հոգեւոր իշխանութեան եւ հենց հոգեւոր դասի ներկայացուցիչների վրայ էլ դնում է աշխարհականների մտաւոր ու բարոյախրատական դաստիարակութեան խնդիրները[5]:

Թղթի ներածականում անդրադառնալով քրիստոնէական հաւատքի հիմնարար ճշմարտութիւններին՝ Շնորհալին ներկայանում է որպէս ներողամիտ ու մխիթարող հայր եւ դէպի փրկութիւն առաջնորդող քաջ, մշտարթուն ու զգօն հովիւ: Նա ուսուցանում է, որ քրիստոնէութեան ճշմարիտ դաւանութիւնը[6] մեր ներսի աստուածային տաճարի հիմքն է, որի վրայ բարձրացած շէնքը մեր գործած բարի գործերով է ամբողջանում[7]: Ե-

---

[2] Ա. Գ. Սուքիասեան, *Կիլիկիայի հայկական պետութեան եւ իրաւունքի պատմութիւն (XI–XIV դդ.)*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1978, էջ 203:

[3] Ա. Ասլանեան *Հայաստանի պետութեան եւ իրաւունքի պատմութիւն. Ուսումնական ձեռնարկ բուհերի համար*, «Վան Արեան» հրատ., Երեւան, 2009, էջ 156:

[4] Է. Վ. Պօղոսեան, *Հայաստանի պետութեան եւ իրաւունքի պատմութիւն*, Հեղինակային հրատ., Երեւան, 2009, էջ 191:

[5] Գառնիկ Սաֆարեան, *Միջնադարեան հայ իրաւունքը եւ իրաւաքաղաքական միտքը (X–XIII դդ.)*, ԱՌՏ հրատ., Երեւան, 2008, էջ 213:

[6] «*Պարտ եւ արժանի է Քրիստոսի երկրպագուաց եւ յանուն սուրբ Երրորդութեանն մկրտելոց խօստովանել համագոյ զերիս անձնաւորութիւնն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, մի բնութիւն եւ մի աստուածութիւն եւ մի իշխանութիւն՝ համապատիւ եւ զուգափառ: Ոչ յումեքէ եղեալ եւ ոչ յետոյ սկսեալ եւ ոչ ի խոնարհութենէ ի բարձրութիւն ամբարձեալ, կամ ի տկարութենէ ի զօրութիւն փոփոխեալ, այլ յառաջ քան զամենայն յաւիտեանս էր եւ յայժմուս է եւ յանվախճան յաւիտեանսն եղիցի՝ անեղ եւ անմահ էութիւն, աներեւոյթ ի բնութենէ եւ երեւելի վասն արարածոցս, տեսող ամենայնի եւ անտես յամենայնէ...*»: Աւելի ընդարձակ տե՛ս՝ Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, աշխատ.՝ Է. Մ. Բաղդասարեան, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 1995, էջ 64-67:

[7] «*Եւ արդ՝ այս դաւանութիւն ճշմարիտ հաւատոյ՝ հիմն է աստուածայնոյ տաճարիս որ ի մեզ: Իսկ գործք բարեաց՝ շինուածն է ի վերայ այսր հիման...* »: *Ներսէս Շնորհալի, Թուղթ ընդհանրական*, էջ 67: Հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, «Թուղթ ընդհանրական», գրաբարից աշխարհաբարի վերած.՝ տէր Մեսրոպ քահանայ Ա-

թէ մէկն այս հիմքի վրայ «ոսկով» կառուցի, որն արդարութիւնն ու ճշմարտութիւնն է, «արծաթով» կառուցի, որը մտքի մաքրութիւնն ու սրտի սրբութիւնն է, «թանկարժէք քարերով» կառուցի, որոնք բազմապատիկ առաքինութիւնների տեսակներն են, ինչպիսիք են՝ սէր, խոնարհութիւն, ողորմածութիւն, անոխակալութիւն, պահք, աղօթք, ժուժկալութիւն. սրանք եւ սրանց նմանները արդար հոգիների կողմից հաւատքի հիմքի վրայ դրուած թանկարժէք քարերն են: Հետեւաբար՝ նա, ով ունի կենդանի հաւատք, այսինքն՝ ճշմարիտ դաւանութիւնը եւ հաւատքի գործերը, երբեք չի յանդգնում սրտում չարութիւն խորհել կամ բերանով անիրաւութիւն խօսել եւ կամ հոգով մեղք գործել: Եւ ինչպէս գլուխը, առանց մարմնի հետ կապուելու, չի կարող կենդանի մնալ, ոչ էլ մարմինն՝ առանց գլխի, նմանապէս՝ հաւատքն առանց գործերի եւ գործերն առանց հաւատքի՝ երկուսն էլ մեռած են: Քանզի ինչպէս մեռած անդամները մարմնի գործունէութեանը ոչնչով պիտանի չեն, այնպէս էլ մեռած հաւատքը հոգուն զօրութիւն չի տալիս: Ապա մեծ աստուածաբանը յաւելում է, թէ ոչ ոք թող չմտածի, թէ մենք, մեզ մեղքի ախտերից ազատ համարելով, բժշկական այս դեղը ձեզ ենք մատուցում որպէս հիւանդների, այլ ամէն ոք թող գիտենայ, որ մենք ամէնքից աւելի կարիք ունենք հոգու բժշկութեան: Բայց եթէ յիմար հիւանդը մերժում է իր առողջութեան դեղը, որն իրեն մատուցում է մի հիւանդ բժիշկ՝ տեսնելով նրա մարմնի ցաւերը, ապա իմաստուն մարդը չի հետաքրքրւում բժշկի բնութեամբ՝ առո՞ղջ է, թէ՞ հիւանդ, այլ քննում է դեղի օգտակարութիւնը՝ առողջարա՞ր է, թէ՞ վնասակար: Արդ, դուք էլ մեր անարժանութեան եւ հոգեւոր պարտականութիւնների թերութիւնների պատճառով մի՛ արհամարհէք եւ ընդունէ՛ք ձեր անձերում հոգիների օգտակար դեղը, որը ձեզ ենք մատուցում: Աղաչում եմ, ընդունեցէ՛ք այն սիրով եւ յօժարութեամբ... Քանզի թէեւ մենք անարժան ենք, սակայն մեր խօսքը, քանի որ աստուածային է, արժանի է ընդունուելու: Եւ ընդունելն ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ գործով կատարելը: Ուստի աղօթենք միմեանց համար, մենք՝ ձեզ համար, իսկ դուք էլ՝ մեզ համար:

Ամփոփելով ներածական մասը՝ իմաստուն հայրապետն իր խօսքն ուղղում է հայ հասարակութեան տարբեր դասերի ներկայացուցիչներին:

Վանքերի խարազնազգեստ կրօնաւորներին համարելով աշխարհի սիւներ եւ թշնամու դէմ պարիսպ, մարմնաւոր հրեշտակներ եւ երկրի վրայ լուսատու աստղեր, որոնց բարի ու լուսաւոր վարքով միշտ փառաւորւում է երկնային Հայրը, Շնորհալին աղաչում է նրանց չպակասեցնել իրենց հաւատքի լապտերների լոյսը, չնուազեցնել ողորմութեան ու սրբութեան իւղը,

---

րամեան, Տիգրան Խաչատրեան, Սեդա Ստամբոլցեան, *Գանձասար հանդէս*, 1991, էջ 31:

այլ իրենց հոգիներում մշտավառ առաքինութեամբ անշէջ պահել աստուածութեան ճառագայթները[8]: Նրանց յորդորում է նիւթական սիրոյ պատճառով չսառեցնել իրենց հոգիները Քրիստոսի սիրոյ հրից, չվերադառնալ աշխարհիկ ախտերին՝ հեշտասիրութիւններին ու նիւթեղէն ցանկութիւններին, խոստովանութեամբ մաքրուել անմաքուր խորհուրդներից ու գործերից: Օտարների առջեւ վատթար խօսքերով կամ անպատշաճ գործերով առիթ չտալ հայոց սուրբ հաւատքն ու կարգը հայհոյելու, ագահութեան ախտի պատճառով չհեռանալ միաբանակից եղբայրներից, որպէսզի իրենց վաստակածը ոչ թէ ամբողջ եկեղեցու, այլ միայն իրենց համար ամբարեն, գիւղերում ու քաղաքներում աշխարհականների հետ չբնակուեն, որպէսզի բերանի խօսքերի գարշութիւն, վատթար գործեր, անպատկառ որովայնամոլութիւն, անառակ արբեցութիւն եւ ամէն տեսակ անկարգութիւններ չգործեն: Իսկ եթէ պատահի, որ աշխարհի մէջ (իմա՝ վանքից, անապատից դուրս – Ա.Մ.) բնակուեն, պէտք է իրենց պատշաճ, աստուածային եւ ուղիղ վարքով լուսատու լինեն, որ Աստծոյ անունը փառաւորուի: Այդուհետ Շնորհալին Աստծոյ եւ իր հրամանով կանոնական օրէնք է սահմանում, որ խարազնազգեստ կրօնաւորներն այսուհետ վանքի մէջ բնակութիւն հաստատեն եւ մինչեւ իրենց վախճանը ապաշխարութեամբ եւ պարկեշտութեամբ կենցաղավարեն՝ համաձայն վանական կարգի ու կերպի: Իսկ եթէ նրանցից մէկը չանսայ հայոց հայրապետի գրած աստուածային օրէնքներին եւ չհեռանայ աշխարհից, այլ մինչեւ իր մահը յամառօրէն մնայ նոյն վիճակում, ապա Շնորհալին իրեն անպարտ է համարում այդպիսի կրօնաւորի կորստեան խղճմտանքից, Աստծոյ առջեւ հենց այդ վանականը պարտական կը լինի իր սեփական արեան համար: Միաժամանակ քահանաներին պատուիրում է այդպիսի կրօնաւորներին չարժանացնել ո՛չ հաղորդութեան, ո՛չ էլ օրինաւոր թաղման, մանաւանդ նրանց, որոնք մինչ ի մահ կը մնան անզղջութեան մէջ[9]:

Մէկ անգամ եւս շեշտելով, որ կրօնաւորը չպէտք է ստացուածք ու եկամուտ ունենայ, որպէսզի, նիւթականի մասին մտածելով, աստուածային առաքինութիւնների աննիւթական հոգսերից չկտրուի ու իրեն գցի բազմաթիւ վնասների ու հոգսերի ծանրութեան տակ: Աշխարհականների պէս այգեգործութեամբ զբաղուող կրօնաւորներին Շնորհալին պատուիրում է այգեկութքին իրենց ստացած բերքի մի մասը Աստծուն տալ՝ աղքատներին ու կարօտեալներին բաշխելու միջոցով, իսկ պտուղ խնդրողներին էլ դատարկ ու ձեռնունայն ետ չդարձնել, որպէսզի Աստուած էլ իրենց Իր

---

[8] *Շնորհալի, Թուղթ ընդհանրական*, էջ 75, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, 1991, էջ 38:

[9] *Շնորհալի, Թուղթ ընդհանրական*, էջ 77-78, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 40-41:

տնկած դրախտից ունայն ետ չդարձնի: Բերքը տալիս էլ խրատում է, որ խոժոռ դէմքով, զայրացած սրտով ու դժկամ խօսքերով չտան՝ Կայենի մատուցած զոհաբերութեան պէս, որը հաճելի չեղաւ Աստծուն, այլ զուարթառատ կամքով մատուցեն: Գինու ժամանակ էլ պէտք է գինուց բաժին հանեն Աստծուն: Իսկ երբ իրենց պէտք եղածից աւելի գինի ստանան, եւ հարկ լինի վաճառել, ապա վաճառքի դրամից աւելի պէտք է պտղաբերեն Քրիստոսին՝ բաժանելով տառապեալներին ու գերեալներին: Երկրի վրայ չպէտք է գանձեր ամբարել եւ յուսալ, թէ մահից յետոյ ուրիշների ձեռքով այդ ունեցուածքը Աստծուն կը տրուի հանգուցեալի հոգու փրկութեան համար: Ուստի Շնորհալին, ուսուցանելով Սողոմոն Իմաստունի խօսքով («Ով ողորմում է աղքատին, փոխ է տալիս Աստծուն», Առակաց ԺԹ. 17)՝ թախանձում է՝ ոչ ոքի մի՛ վստահեցէք, այլ դուք ձե՛ր ձեռքով փոխ տուէք Աստծուն: Ապա մի անգամ եւս յորդորում է աղքատներին ողորմել՝ համաձայն Տիրոջ հետեւեալ խօսքի. «Երանի ողորմածներին, քանի որ նրանք ողորմութիւն պիտի գտնեն» (Մատթէոս, Ե. 7)[10]: Միաժամանակ Շնորհալին կրօնաւորներին կրկին յիշեցնում է, որ պէտք է սակաւապետ, ժուժկալ ու չափաւոր կենցաղով ապրեն, քանզի որովայնամոլութեամբ շատակերութեան կամ գինեմոլութեան տրուելով՝ մեղանչման մէջ կը յայտնուեն: Յորդորում է զգուշանալ եւ հեռու մնալ սպանութիւնից, շնութիւնից, գողութիւնից, գողութեան համար ստութիւնից, սուտ երդումից, ուրացումից, ծուլութիւնից, բամբասանքից, դատարկաբանութիւնից, չարախօսութիւնից, անէծքից, վիրաւորելուց, ընկերոջը դատելուց, պատուիրում, որ իրենց շրթունքներին ու լեզուին դուռ ու դռնապան դնեն, որպէսզի միայն օգտակար ու բարի խօսքերն ազատ ելք ունենան, իսկ չար, վնասակար ու անօգուտ խօսքերը սրտի մէջ բանտարկուեն, միաժամանակ խրատում, որ շահաւէտ ու օգտակար խօսքերը յաճախակի ու անտեղի չարտաբերեն, չլինի թէ լսողները ձանձրանալով նողկան: Ամփոփելով խարազնազգեստ կրօնաւորներին՝ «մաքրագոյններիդ երամին», ուղղուած իր խօսքը՝ Շնորհալին նրանց պատգամում է, որ իրենց խորհուրդները, խօսքերն ու գործերը, հոգու եւ մարմնի ամէն շարժում պարկեշտ ու աստուածավայել լինեն, որպէսզի Աստծոյ անուան եւ կրօնաւորութեան իրենց կարգին հայհոյանքի եւ պարսաւանքի պատճառ չլինեն, այլ տեսնողներին եւ լսողներին գովասանքի եւ փառաւորման առիթ տան, միով բանիւ՝ «*Այնպէս լուսաւորեսցի լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի՝ տեսցեն զգործս ձեր բարիս եւ փառաւորեսցեն զՀայրն ձեր, որ յերկինս է*» (Մատթէոս Ե. 16)[11]:

---

[10] Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 83, 86, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 46, 49:

[11] Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 93, 95, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 56, 58:

Յաջորդիւ Շնորհալին իր խօսքն ուղղում է վանական սուրբ ուխտերի առաջնորդներին՝ նրանց համարելով եկեղեցու մարմնի աչքերի դերն ու սպասաւորութիւնը կատարողներ, քանզի ինչպէս աչքն է անձին առաջնորդում ամէնայն լաւ ու վատ շարժման, նմանապէս էլ առաջնորդները՝ առաջնորդուողներին: Շնորհալին նրանցից պահանջում է անփոյթ չլինել աշակերտող հոգեւոր եղբայրների նկատմամբ, նրանցից պահանջել ոչ միայն նիւթական գործերի, այլեւ հոգեւոր գործերի անթերի կատարում, խտրական վերաբերմունք չդրսեւորել, այլ, ըստ սուրբ Բարսեղի կանոնադրութեան[12], սէրը պէտք է լինի ամէնքի հանդէպ, իսկ պատիւը՝ արժանաւորների: Պէտք է պատուել ծերերին, հոգ տանել նրանց մասին, խնամել տկարներին, եկեղեցի եկած նուէրը չսեփականել, չյափշտակել վանքի առաջնորդութիւնը: Խօսքի աւարտին Շնորհալին Աստծուց խնդրում է, որ յաջողութիւն տայ առաջնորդներին ու առաջնորդուողներին՝ իր հետ երկնային ճանապարհով ընթանալու, որպէսզի բոլորով հանդերձ արժանանան խոստացած բարիքներին, որոնք Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի մէջ են[13]:

Ապա Շնորհալին իր յորդորական խօսքն է ասում աշխարհի մէջ գտնուող եկեղեցու առաջնորդներին՝ եպիսկոպոսներին՝ թախանձելով, որ սթափուեն ու իմաստութեամբ ճանաչեն իրենց աստիճանի բարձրութիւնն ու դերը, քահանաներին ու ժողովրդին գլուխ եւ հրամանատար լինեն, մտքի աննիրհ աչքերով բոլորի վրայ հսկեն, խոտորուածներին ուղղեն եւ ուղիղներին իրենց ուղղութեան մէջ հաստատուն պահեն: Պօղոս Առաքեալից մէջբերելով՝ թէ «Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել» (Ա. Տիմոթէոս, Գ. 2), յաւելում է, որ նաեւ «*որպէս Աստուծոյ տնտեսի, հեզ, ցած, պարկեշտ, հիւրասէր, բարեսէր, արդար, սուրբ, ժուժկալ, ո՛չ արծաթասէր, մի՛ կռուող, մի՛ հարկանող, այլ հանդարտ եւ այլն եւս*»[14] լինի:

Շնորհալին ցաւով է արձանագրում, որ ներկայ թշուառ ժամանակներում եպիսկոպոսներն այնքան են հեռացել առաքելական ժամանակների եպիսկոպոսների բարի նմանութիւնից, որ այժմ եպիսկոպոսական աթոռ ստանձնել ցանկացողների միակ նպատակն է զանազան հնարքներով հարստութիւն հաւաքել հաւատացեալներից եւ փառք որսալ փառաւորողներից, ինչն իրապէս անարգանք է եւ ոչ թէ փառք: Եւ զանազան հնարքներով ու բռնութեամբ հաւատացեալներից յափշտակած ու կորզած դրա-

---

[12] Խօսքը տասներկու տիեզերական վարդապետերից սուրբ Բարսեղ Կեսարացու կամ Բարսեղ Մեծի մասին է. նա է կազմակերպել Արեւելեան վանական կեանքը՝ գրելով վանական կեանքին վերաբերող գործեր եւ առանձին կանոնադրութիւն:

[13] Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 99, 101, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 62, 64:

[14] Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 104, հմմտ.՝ Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 67:

մը, որը պէտք էր եկեղեցու պայծառութեան եւ աղքատների կարիքների համար գործածել, մաքսաւորների պէս հաւաքում են ու նուիրում մեր՝ հայոց աշխարհի բռնակալներին: Ուստի այդպիսիք, ինչպէս նաեւ հոգեւոր պատճառներով աթոռազուրկ եղած եպիսկոպոսները, որոնք ցանկանում են այլազգիների բռնութեամբ եւ տուրքերի յաւելումով դարձեալ յափշտակել եպիսկոպոսութիւնը, ոչ միայն քրիստոնէական հաւատքին ու կարգին, այլեւ օրինաւոր քահանայական թաղման եւ սուրբ պատարագի մէջ յիշատակման արժանի չեն: Իսկ ճշմարտութեան ջատագով ու բարիքներին հետեւող եպիսկոպոսներին յորդորում է լիովին պատրաստ լինել հոգեւոր հովւութեան իրենց գործին, որպէսզի դատաստանի օրը համարձակ ու պարզերես ներկայանան մեր Տէր Յիսուս Քրիստոսին[15]:

Այնուհետեւ Շնորհալին իր խօսքն է յղում քահանաների դասին, նշում, որ աստիճանով եպիսկոպոսներից յետոյ երկրորդն են ու իրենց պաշտօնով սահմանուած են բոլոր հոգիներին Աստծուն նուիրելու համար՝ սուրբ աւազանի մկրտութեամբ ծնելով բոլոր մարդկանց որպէս երկնաւոր Հօր որդեգիրներ եւ Քրիստոս Աստծոյ ժառանգակիցներ:

Ապա քահանաներին զգօնութեան ու զգաստութեան է կոչում, որպէսզի բանան իրենց մտքի աչքերը, արթնանան այս կենցաղի մահահրաւէր թմրութիւնից եւ ճանաչեն իրենց երկնաւոր գործի զօրութիւնը, որին հրաւիրուեցին եւ որը հրեշտակային գերաշխարհիկ զօրութիւններից աւելի վեր է նրանց համար, ովքեր անարատութեամբ եւ սրբութեամբ են կատարում այն: Քահանաներից պահանջում է, որ արիաբար եւ յօժարամիտ սրտով, առանց ծուլութեան, ամէն ժամին համապատասխան սուրբ հայրերի սահմանած աղօթքները անթերի կատարեն եւ մաքուր հոգով, սուրբ սրտով, անարատ հաւատքով, մեծ յոյսով, պարզ մտքով, կատարեալ սիրով, երկիւղով սպասաւորեն աստուածային խորհրդին, հովուեն Աստծոյ ժողովրդին, միշտ բարի գործեր սովորեցնեն, բարի օրինակ տան բոլորին[16]:

Հայոց բազմաշնորհ հայրապետը քահանաներից պահանջում է, որ առանց *Պատարագամատոյց*ում նշուած սուրբ հանդերձներով զգեստաւորուելու՝ սուրբ պատարագ չմատուցեն, Աւետարան չկարդան, խաչ չվերցնեն իրենց ձեռքը կամ այլ սրբութիւնների չմերձենան: Խոտելի ու դատապարտելի է համարում առանց ճշմարիտ խոստովանութեան, ծածկելով մեղքի գործերն իրենց հոգում, այսինքն, անարժանութեամբ աստուածային խորհրդին սպասաւորելը, ժողովրդից որեւէ մէկին առանց քննելու, առանց մարդու հաւատքի եւ գործերի խոստովանութիւնը լսելու հաղոր-

---

[15] Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 114-117, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 76-79:

[16] Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 118-120, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 80-82:

դութիւն տալը: Քահանաներին ուսուցանում է, որ իրենց աչքերը, ականջ-ները, լեզուն եւ մարմնի բոլոր անդամները կրթեն ի բարին շարժուելու եւ չարի հանդէպ անշարժ մնալու համար, իրենց միտքը ողջախոհութեամբ եւ սրբութեամբ աշխարհիկ ցանկութիւններից ու զբօսանքներից հեռու պահելուց յետոյ միայն մօտենան երկնային խորհրդի սպասաւորութեանը, որպէսզի ոչ թէ իրենց անձի դատապարտութեան համար ուտեն եւ ըմպեն Տիրոջ մարմինն ու արիւնը, այլ իրենց ու իրենց ժողովրդի մեղքերի քաւու-թեան եւ հոգիների մաքրութեան համար: Միաժամանակ թախանձագին աղաչում է, որ քահանաները դժուարաշարժ լինեն վիճաբանութեան ու կռուի մէջ ու դիւրաշարժ՝ հաշտութեան եւ խաղաղութեան մէջ, չջանան զրկել եւ անիրաւել ընկերոջը: Յորդորում, որ քահանաներից աւագներն ու իմաստութեամբ հաստատունները ներողամտութեամբ ու համբերու-թեամբ սիրաշահեն կրտսերներին ու տկարամիտներին, իսկ կրտսերնե-րին էլ պատուիրում է, որ խոնարհ եւ հնազանդ լինեն աւագների եւ իմաս-տուն քահանաների նկատմամբ: Պահանջում է չծուլանալ, տգիտութեան կուրութիւնը չնախընտրել քահանայական ուսումից, եկեղեցական գրքերը ճիշտ կարդալ, սաղմոսներն ու պատարագի խօսքերն անգիր իմանալ, եր-կիւղով կատարեն պատարագն ու սուրբ խորհուրդները, կնքահայրերը լի-նեն Քրիստոսի ճշմարիտ երկրպագուներ: Քահանաներին սաստում է, որ, ըստ հարկի, դրամ չպահանջեն մկրտութեան անգին շնորհի կամ մահա-մերձին հաղորդութիւն տալու համար, քանզի նրանցից, ովքեր ունեն եւ սիրով տալիս են որպէս եկեղեցու նուէր՝ վերցնեն, իսկ նրանց, ովքեր աղ-քատ են, չբռնադատեն: Խստագոյնս պահանջում է այլազգիների մանուկ-ներին դժուարութեամբ եւ բացառիկ՝ հարկադրուած դէպքերում մկրտել, ինչպէս նաեւ ծածուկ, գաղտնի պսակ չկատարել, այլ եթէ ծնողներ ունի, եւ միասին են ապրում, նրանց գիտութեամբ եւ կամքով թող լինի, իսկ եթէ ծնողների հետ չի ապրում, բոլորի ներկայութեամբ թող յայտնապէս դրուի պսակը, որպէսզի բոլորը վկայեն, թե ուղիղ է եւ Աստծոյ օրէնքներին ո՛չ հակառակ, կնաթող այրերին ու այրաթող կանանց թող ոչ ոք առանց կա-նոնական հրամանի չպսակի, որպէսզի, ըստ կանոնի, քահանան չլուծար-ուի, չզրկուի քահանայական կարգից, իսկ դրուած պսակն էլ քանդուի, ա-ռեւանգման դէպքում պսակ չկատարել, քանզի դա Աստծոյ օրէնքներին հակառակ է եւ բիւր չարիքների պատճառ, պսակուելու համար հասուն տարիք պէտք է ունենան, տղաները՝ 15ը լրացրած, իսկ աղջիկները՝ 12ը կամ աւելին, որպէսզի կարողանան բանականների նման հաճութեամբ զուգուել իրար հետ, եւ հաստատուն լինի զուգաւորումը[17]: Շնորհալու հե-

[17] Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 122, 124, 129-31, 133-34, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 84, 86, 90-92, 94-95:

տեւողութեամբ՝ Մխիթար Գօշն իր *Դատաստանագրքի* ՃՂԲ. գլխում արգելում է անչափահաս տղային պսակելը. «*Տղայոց պսակ մի՛ ոք իշխեսցէ դնել, մինչեւ ի չափ հասեալ... եւ թէ ոք յանդգնի՝ լուծցի ի քահանայութենէն ու հարիւր դրամ փուգանս փացէ յեկեղեցին...* »[18]: Անուանի օրէնսգէտը ՄԽԹ. գլխում էլ գրելով, թէ «*Կանոնական հրամանաւ է տղայոց պսակ ոչ աւրինել մինչեւ ի գիտել զկարիս բնութեանն*», արգելում է սեռահասուն մեծ տղամարդուն պսակել փոքրահասակ աղջկայ հետ[19]: Սմբատ Սպարապետի *Դատաստանագրքի* ՃԺԱ. յօդուածը եւս տղամարդու համար ամուսնութեան նուազագոյն տարիք է սահմանում 15 տարեկանը[20]:

Ուշագրաւ է, որ Շնորհալին կողմնակից է, որ ամուսնացող այրը աւելի մեծ պէտք է լինի տարիքով, քան կինը: Որպէս այս պահանջի հիմնաւորում, նա նշում է այն փաստը, որ «*որպէս զԱդամ նախ ստեղծեալ Աստուծոյ եւ ապա զԵւայ*»[21]: Որ ամուսնացող այրը աւելի մեծ պէտք է լինի տարիքով, քան կինը՝ ձեւակերպուած ենք տեսնում նաեւ Գօշի *Դատաստանագրքում*. «*Յարմարումն առն եւ կնոջ ըստ պատշաճի ցուցեալ է՝ ժամանակաւ երէց լինել առն, եւ կրտսեր՝ կնոջն, որպէս ի ստեղծմանն ցուցաւ նախաստեղծիցն, զի ամենայնիւ իշխան լիցի այրն ի վերայ կնոջն, որպէս յայլսն, նմանապէս յամուսնանալն*»[22]:

Շնորհալին քահանաներից նաեւ պահանջում է, որ ստիպողաբար, բռնաւորների հարկադրմամբ, առանց տղամարդու եւ կնոջ կամքի, պսակադրութիւն չկատարեն: Նման պսակի լուծարումը նա համարում էր խղճից ազատ, քանզի այդ պսակը Աստծոյ պատուիրանի համաձայն չի կատարուել, այլ մարդկանց բռնութեամբ ու հարկադրանքով: Այսինքն՝ պսակադրութեան անհրաժեշտ նախապայման էր համարում ե՛ւ տղամարդու, ե՛ւ կնոջ համաձայնութիւնը, ազատ կամարտայայտութիւնը: Պսակի համար չհասութիւն է համարում, եթէ երկու կողմերի ազգակցութեան աստիճանը կատարելապէս չորրորդ սերնդի չէ, ուստի քահանաներից պահանջում է չօրհնել այդպիսի պսակը: Շնորհալին քահանաներից պահանջում է նաեւ Բուն Բարեկենդանից մինչեւ Հոգեգալստեան շաբաթապահքի աւարտը, ինչպէս նաեւ տարուայ բոլոր կիրակիներին, պսակ չկատարել[23],

---

[18] Մխիթար Գօշ, *Գիրք դատաստանի,* աշխ.՝ Խոսրով Թորոսեան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975, էջ 110:

[19] Նոյն, էջ 153:

[20] Սմբատ Սպարապետ, *Դատաստանագիրք,* փոխադրութեան հեղինակ եւ խմբագիր՝ Մաքսիմ Ոսկանեան, Իրաւունք, Երեւան, 2008, էջ 97:

[21] Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 134:

[22] Գօշ, էջ 37, հմմտ.՝ էջ 309:

[23] Ըստ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սահմանած կարգի՝ ներկայումս պսակի համար արգելուած օրեր են՝ տարուայ բոլոր Կիրակի օրերն ա-

քանզի քառասնօրեայ պահոց շրջանը Տիրոջ չարչարանքը խորհրդանշող սգոյ եւ տրտմութեան օրեր են, ոչ թէ գինարբուքի եւ հարսանեկան ուրախութիւնների: Նաեւ պահանջում է, որ քահանաները խօսքով կամ գործով չընդդիմանան եպիսկոպոսներին, եկեղեցու դատաստանը այլազգի կամ քրիստոնեայ մարմնաւոր իշխանների մօտ չտանեն, քաղաքի կամ գիւղի հոգաբարձու չլինեն, աշխարհական իշխանների գաւառապետ կամ հարկեր եւ սակեր գրող չլինեն կամ աշխարհիկ այլ գործակալութեամբ, ինչպէս նաեւ զինուորականների նման ձիավարժութեամբ կամ զինավարժութեամբ չզբաղուեն, ուրիշ քահանայի կողմից պատուիրանազանց բանադրուածներին էլ եկեղեցի չընդունեն[24]:

Ներսէս Շնորհալին ընդունում էր մարդկանց հաւասարութեան գաղափարը[25], իսկ որպէս պետականամէտ գործիչ՝ խորապէս մտահոգուած էր

ռանց բացառութեան, իւրաքանչիւր Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը, հինգ տաղաւար տօների մեռելոցի օրերը, Ս. Ծննդեան, Անուանակոչութեան, Տեառնընդառաջի, Աւետման, Ս. Համբարձման օրերը, ամբողջ Մեծ պահքի եւ Զատկի առաջին ութ օրերը՝ այսինքն, Բուն Բարեկենդանից մինչեւ Նոր կիրակի, Առաջաւորաց, Վարդավառի, Վերափոխման, Խաչվերացի, Յիսնակի շաբաթապահքերի հինգ եւ Ս. Ծննդեան պահքի ու Ճրագալոյցի եօթ օրերը: Պսակի արարողութիւն կատարելու արգելեալ օրերը վերջանում են, ըստ եկեղեցական օրերի կանոնի, երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, ուստի ներելի է երեկոյեան ժամերգութեան աւարտից ու օրը երեկոյեանալուց յետոյ պսակ օրհնել, եթէ յաջորդ օրը արգելուած օր չէ: Վերոյիշեալ տեղեկատուութիւնը սիրայօժար մեզ տրամադրելու համար մեր շնորհակալութիւնն ենք յայտնում հոգեշնորհ Զաքարիա Ծ. վրդ. Բաղումեանին:

[24] Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 135-40, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 97-101:

[25] Գ. Սաֆարեան, «Մխիթար Գօշի պետահրաւական հայեցակարգը (մահուան 800ամեակի կապակցութեամբ)», *Մխիթար Գօշի գիտական ժառանգութիւնը. պատմութիւն եւ արդիականութիւն (գիտաժողովի նիւթերի ժողովածու)*, *Գիրք 3,* Եւրասիա միջազգային համալսարան, Երեւան, 2014, էջ 18: Շնորհալին հետեւեալ կերպ է շարադրում մարդկանց հաւասարութեան մասին իր կարծիքը. « *...զի ոչ թէ այլ բնութիւն է նոցա, եւ այլ՝ ձեր. այլ ի միոյ կաւոյ եւ ի խառնուածոյ, քանզի նմանապէս է տէրանց եւ ծառայից, փարթամաց եւ աղքատաց, սկիզբն գալոյ յաշխարհ եւ կատարած ելիցն յաշխարհէ: Վասն զի զուգահաւասար ամէնայնքն ծննդեամբ մտանեն յերկիր եւ մահուամբ ելանեն ի սմանէ, իսկ մեծութիւն եւ փոքրութիւն, բարձրութիւն եւ խոնարհութիւն, բարեբախտութիւն եւ պանդխտութիւն, ի մէջ ծննդեանն եւ մահուանն պատահեն մարդկան, որ են իբրեւ զերազք զարթուցելոց, որպէս ի փորձոյ անտի յայտնի է ամէնեցուն իմաստնոց եւ տգիտաց, զի ոչ ինչ ի սոցանէ ունի զհաստատութիւն: Վասնորոյ մի՛ վասն անցաւորիս կենաց կորուսանէք զյաւիտենական զկեանսն...* » (*Շնորհալի, Թուղթ ընդհանրական*, էջ 145):

իրաւակարգի եւ օրինականութեան պահպանման ու հասարակութեան առողջացման հարցերով:

Ներսէս Շնորհալու վերոյիշեալ յորդորների ու կանոնների յետագայ զարգացմամբ տեսնում ենք իրաւական ձեւակերպումներ Գօշի *Դատաստանագրքի* հետեւեալ գլուխներում.- *Գլուխ Գ. Յաղագս դատաստանաց հարց անապատաց եւ նոցունց եղբարց, Գլուխ Դ. Յաղագս դատաստանաց վարդապետաց, Գլուխ Ե. Յաղագս դատաստանաց քահանայից, Գլուխ ԼԶ. Յաղագս դատաստանաց, որք չիցեն քահանայք եւ իրս ինչ գործիցեն, եւ կամ քահանայք՝ անիրաւս ինչ, Գլուխ Խ. Յաղագս դատաստանաց իշխելոց եպիսկոպոսին եկեղեցականացն իրաց, Գլուխ ԽԱ. Յաղագս դատաստանաց եպիսկոպոսաց եւ քահանայից, որ զպէտս ժառանգաւորացն ոչ տայցէն, Գլուխ ԽԳ. Յաղագս դատաստանաց երկրորդ ձեռնադրելոց, Գլուխ ԽԴ. Յաղագս դատաստանաց գողոց յեկեղեցւոյ, Գլուխ ԽԷ. Յաղագս դատաստանաց եպիսկոպոսաց չձեռնադրել զոք յիւրոցն արտաքոյ կամաց եւ միաբանութեան այլոցն, Գլուխ ԽԸ. Յաղագս դատաստանաց եպիսկոպոսաց, որ արկանէ զանձն յերկրաւոր հոգս, Գլուխ ՃԼԵ. Յաղագս դատաստանաց ձեռնադրութեան եպիսկոպոսաց, Գլուխ ՃԼԸ. Յաղագս դատաստանաց եպիսկոպոսաց եւ քահանայից, որ զայլոց վիճակ եւ զժողովուրդ յափշտակեն, Գլուխ ՃԼԹ. Յաղագս դատաստանաց անկարգապէս եկեղեցականաց, Գլուխ ՃԽԸ. Յաղագս դատաստանաց քահանայից պղծութեան, Գլուխ ՃԾԱ. Յաղագս դատաստանաց գաւառի երիցանց, Գլուխ ՃԾԲ. Յաղագս դատաստանաց քորեպիսկոպոսաց, Գլուխ ՃԾԹ. Յաղագս դատաստանաց եպիսկոպոսաց չձեռնադրել յայլոյ վիճակէ, Գլուխ ՃԿԴ. Յաղագս դատաստանաց եպիսկոպոսաց, որ զայլոյ եկեղեցեաց առեալ զիւրն զարդարիցէ* եւն.[26]: Շնորհալու վերոյիշեալ յորդորների ու կանոնների վերաբերեալ առանձին յօդուածների տեսքով իրաւական ձեւակերպումներ ենք գտնում նաեւ Սմբատ Սպարապետի *Դատաստանագրքի* հետեւեալ օրէնքներում.- Ը. Այն մարդու մասին, որ քահանայ չէ, բայց ներկայանում է իբրեւ քահանայ, Ժ. Նրանց մասին, ովքեր Աստծոյ իրաւունքները կաշառքով ծախեն, ԺԳ. Այն հոգեւորականի մասին, որ եկեղեցու ձէթը կամ մոմը իր տուն տանի, ԺԶ. Այն մասին, թէ կարո՞ղ են եպիսկոպոսները եկեղեցու կողմից հայրենական կալուածք ունենալ, ԺԷ. Այն մասին, որ եպիսկոպոսները աշխարհական գործով չպէտք է զբաղուեն, Ի. Վարդապետ լինելու իրաւական սահմանի մասին, ԻԱ. Այն մասին, որ եպիսկոպոսները պարտաւոր են հնազանդ լինել արքեպիսկոպոսին, ԻԲ. Երբ եպիսկոպոսը դատում է հոգեւորականին կամ կարգալոյծ

[26] Գօշ, էջ 33-34, 34-36, 36-37, 49, 51, 52, 53, 54, 88, 89-90, 93-94, 94-95, 98, 99:

անում, ԻԳ. Եպիսկոպոսների եւ նրանց թեմերի մասին, ԻԵ. Առաջնորդ եկեղեցիների եւ նրանց ժողովրդի մասին, Լ. Քահանաների հպարտութեան եւ ամբարտաւանութեան մասին, ԼԱ. Այն երէցի մասին, որին ժողովուրդը չի հաւանում, ԼԲ. Աւագերէցների եւ եկեղեցապահների մասին, ԼԳ. Վանական աբեղաների մասին, ԽԴ. Վանքերը եպիսկոպոսների կողմից ղեկավարուելու մասին, ԽԹ. Սուտ քահանաների մասին, Ծ. Աբեղաների մասին, որոնց ծուխ չի տրւում, ԾԳ. Այն մասին, երբ եկեղեցու գլխաւորը ջանում է իր ընկերոջ աստիճանը խլել, ԾԴ. Այն մասին, որ եկեղեցականներին արգելւում է վաշխով դրամ տալ, ԿԲ. Եկեղեցական կենցաղավարութիւնը կարգաւորելու մասին, ԿԵ. Անապատականների եւ նրանց եղբայրների մասին, ԿԷ. Այն անգէտների մասին, որ անարժանաբար են հաղորդութիւն տալիս, ՀԴ. Ուխտատեղիների մասին, ՀԷ. Եկեղեցականներին վերաբերող այլ կարգերի ու պարտաւորութիւնների մասին եւ այլ յօդուածներում[27]:

*Թղթ*ի երկրորդ հատուածում Շնորհալին իր ազդու խօսքն է ուղղում աշխարհիկ դասի վերնախաւին՝ իշխաններին, պատուիրում, որ հնազանդ լինեն Աստծոյ օրէնքներին, երկիւղով ու հնազանդութեամբ ծառայեն Տիրոջը, որպէսզի չպատժուեն իբրեւ Տիրոջ դէմ ապստամբներ, այլ որպէս մտերիմ ծառաներ պատիւ ընդունեն երկնաւոր Թագաւորից: Ապա յանձնարարում անիրաւութեամբ չվարուել հպատակների հետ, ծանր ու անտանելի հարկեր չպահանջել, իւրաքանչիւրին օրէնքով եւ ըստ իր կարողութեան չափի դատել, ոչ ոքի չզրկել, տնանկներին ու աղքատներին չնեղել՝ համաձայն աստուածային պատուիրանի, թէ. «*Մի՛ փար պատճառս աղքատին անիծանել զքեզ, զի մի՛ արարիչ նորա լուիցէ նմա եւ հատուսցէ քեզ չարիս*» (Առակաց, Լ. 19)[28]: Շարունակելով իշխաններին տրուող հրահանգները՝ Շնորհալին պահանջում է, որ իրենց երկրի (տիրոյթների - Ա.Մ.) վրայ չար ու անիրաւ գործավարներ եւ գաւառապետեր չնշանակեն, այլ արդարամիտ ու արդարադատ պաշտօնեաներ նշանակեն, որեւէ մէկին անիրաւութեամբ չդատեն, այլ ուղիղ, արդար դատաստան անեն, չանտեսեն այրու եւ աղքատի իրաւունքները, այլ որբի դատը տեսնեն եւ այրու իրաւունքը տան, իրենց ենթականերին չծառայեցնեն անբան կենդանիների պէս, այլ քաղցրութեամբ ու ներողամտութեամբ նրանց վերաբերուեն, չափից աւելի չծանրաբեռնեն, աշխատաժամերը պակասեցնեն, աշխատողների վարձը բռնութեամբ չկտրեն, չխաբեն եւ չստեն՝ ո՛չ հպատակներին, ո՛չ էլ օտարներին, իրենց զինուորների ու բոլոր ծառայողների համար

---

[27] Սմբատ Սպարապետ, *Դատաստանագիրք,* էջ 41, 43, 44, 45, 46, 47, 48, 51, 52, 64, 65, 67, 70, 75, 77, 80, 82:

[28] Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 143, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 103:

սահմանուած թոշակը չպակասեցնեն (քանզի մեծ զրկանք ու անիրաւութիւն է դա), եթէ մէկը չցանկանայ այլեւս ծառայել, բռնութեամբ ու խստութեամբ արգելք չլինեն, այլ ջանան սիրով ու կամքով պահել, եթէ չկայ ծայրայեղ անհրաժեշտութիւն, ապա չերդուեն, աններելի յանցանքով՝ երդմնազանցութեամբ կամ երդումն ուրանալով, չմեղանչեն, տուած երդումը սրբութեամբ պահեն կամ կատարեն, բարկութիւնից դրդուած եւ անարդար իրաւունքով որոշում չկայացնեն՝ պատժի ենթարկելու կամ մահուան դատապարտելու, քանզի Նոր օրէնքը դա չի արտօնում, իսկ Հին օրէնքը թէեւ թոյլատրում է պատժի կամ մահապատժի ենթարկել, սակայն ո՛չ անտեղի, այլ ըստ յանցանքների արժանի լինելու, ուստի, եթէ իշխանութիւն ունենալով՝ Նոր օրէնքով շարժուելը անկարելի են համարում, թող շարժուեն Հին օրէնքի հրամաններով՝ այդ դէպքերի համար սահմանուած, բայց առանց օրէնքի չդատեն, մարդկանց անիրաւաբար չպատժեն կամ չսպանեն, վրիժառու եւ քինախնդիր չլինեն, այլ Քրիստոսի պատուիրանի համաձայն՝ իրենց դէմ մեղանչողների նկատմամբ ներող ու համբերող լինեն, որպէսզի Աստծուց քաղցրութիւն ու բարերարութիւն ընդունեն[29]:

Շնորհալու՝ աշխարհիկ դասի վերնախաւին՝ իշխաններին ուղղուած վերոյիշեալ յորդորների ազդեցութեամբ իրաւական ձեւակերպումներ ենք տեսնում Գօշի *Դատաստանագրքի* հետեւեալ գլուխներում. *Գլուխ Ի. Յաղագս դատաստանաց յանցաւոր իշխանաց առ թագաւորս, եւ այլոց՝ առ նոսա, Գլուխ ԼԵ. Յաղագս դատաստանաց վնասելոց շինականաց ի տէրանց առաւել, քան զսովորականն լեալ հրաման, Գլուխ ԿԱ. Յաղագս դատաստանաց ծառայից եւ աղախնաց, սպանելոց ի տէրանցն, Գլուխ ԿԴ. Յաղագս դատաստանաց ծառայից եւ աղախնաց հարուածոց ի տէրանց*[30] եւ Սմբատ Սպարապետի *Դատաստանագրքի* հետեւեալ յօդուածներում. Է. Երբ մէկը հալածում է իր մշակին եւ ուժից վեր ծանր բեռներ վերցնել տալով՝ սպանում նրան, ՃԽԸ. Մարդու մասին, որ հարուածում է իր ծառային եւ ծառան մեռնում է, ՃԽԹ. Ճորտի մասին, որ փախել է իր պարոնից, ՃՀԱ. Տարբեր դասերի մարդկանց եւ հեծեալների մասին[31] են.:

Կիլիկեան հայկական պետութեան մէջ իր արտօնեալ դիրքով առանձնանում էր զինուորականութիւնը, որը պետութեան հիմքն էր ու անվտանգութեան երաշխաւորը, ուստի պատահական չէ, որ Շնորհալին իր *Թղթ*ում հարկ է համարել առանձին խօսք ուղղել նաեւ զինուորականութեանը: Վերջիններիս համարելով իշխանութիւնների ու պետութիւնների ենթականեր՝ Շնորհալին նրանց պատուիրում է ամէն ինչում հնազանդ

---

[29] Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 144-52, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 104-13:

[30] *Գօշ,* էջ 44, 49, 58, 59:

[31] *Սմբատ Սպարապետ,* էջ 40, 116, 125:

լինել իրենց տէրերին, ցուցադրաբար չծառայել, տիրոջ անձի, նրա ամրոցի կամ ունեցուածքի հանդէպ խօսքով կամ գործով նենգութիւն չանել, արդարութեամբ եւ իրաւունքով վարուել հպատակների հետ, անխղճօրէն եւ անիրաւաբար որեւէ մէկին չնեղել, չզրպարտել, ողորմութեամբ ու սիրով վարուել բոլորի հետ, աղքատների ունեցուածքը չյափշտակել, անմեղ արիւն չհեղել, հասարակ ժողովրդից աւելի՝ երկիւղել Աստծուց, Նրա պատուիրանները պահել, քանզի ամէն ժամ թշնամիների սրի դէմ են պատերազմում, հետեւաբար մարմնական զէնքերից առաւել՝ հաւատքի զէնքերով պէտք է սպառազինուեն՝ այսինքն, աստուածապաշտութեամբ, արդարութեամբ, սրբութեամբ, պահքով, աղօթքով եւ ողորմածութեամբ, որպէսզի պատերազմներում Աստուած լինի իրենց թշնամիների ախոյեանն ու ոսոխներին հալածի իրենց առջեւից[32]:

Զինուորականներից յետոյ իր խօսքն ուղղելով քաղաքացիներին (քաղաքաբնակներին - Ա.Մ.)՝ առեւտրականներին եւ արհեստաւորներին, Շնորհալին նրանց յորդորում է ուղիղ եւ անարատ կենցաղավարութեամբ ապրել, խաբէութեամբ ու նենգութեամբ ապրանքներ չվաճառել անմեղ գնողներին, ստախօսութեամբ եւ սուտ երդմամբ չխաբել ռամիկին ու տգէտին, այլ արդարութեամբ ու շիտակութեամբ վաճառել իրենց ձեռքի գործերը եւ վաճառքի նիւթերը, իրենց պարզամտութեան համար չարհամարհել շինականներին իբրեւ տգէտների, վաշխերի շահով չկեղեքել կարիքաւորներին, այլ որպէս եղբայրներ կարեկից ու օգնական լինել նրանց, ինչ որ փոխ են տալիս, այն միայն պահանջեն պարտապաններից, քանզի Քրիստոս հրամայում է ոչ միայն առանց վաշխի տալ, այլեւ՝ անհատոյց. «*տուք այնոցիկ, յորոց ակն ոչ ունիցիք առնուլ*» (Ղուկաս, Զ. 34), ինչպէս նաեւ իրենց ունեցուածքից ողորմութիւն տալ կարօտեալներին ու աղքատներին, որպէսզի փոխարէնը դատաստանի օրը Քրիստոսից հատուցում ստանան[33]:

Այնուհետեւ Շնորհալին իր խօսքն ուղղում է երկրագործներին ու համայն ժողովրդին՝ համարելով, որ իրենց հոգիները բժշկելու եւ մեղքերի հիւանդութիւնից առողջանալու համար առաւելաբար նրա՛նք ունեն հոգեւոր սպեղանիների կարիք: Վերջիններիս Շնորհալին թախանձում է, որ անցաւոր կեանքի մարմնական հեշտութեամբ չտարուեն ու կորցնեն հոգիների յաւիտենական հանգիստը, որը երկնքի արքայութեան մէջ վայելում են սրբերը: Ապա պատուիրում է չտրուել գինեմոլութեան ու հարբեցողութեան, որ մայր է ամէն տեսակ պղծութիւնների, պոռնկութեան, անիրա-

---

[32] Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 153-55, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 114-16:

[33] Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 156-57, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 117-18:

ութեան, վէճի, անարգալից աղտոտ խօսքերի, իսկ եթէ որեւէ յանցանքով մեղանչել են Աստծոյ դէմ, ապա խոստովանութեամբ ու ապաշխարութեամբ թող քաւեն իրենց մեղքերը, այդուհետ չարի փոխարէն միայն բարիք գործեն, լեզուն սատանայի գործիք չդարձնեն՝ տեղալով չար ու դառը հայհոյանքներ, որոնցով անարգւում է թէ՛ հաւատքը, թէ՛ հոգին, թէ՛ աւազանի մկրտութիւնը, թէ՛ խորհրդակատար քահանան, թէ՛ անձը, թէ՛ բերանը, քանզի այս անարգանքը աւելի մեծ յանցանք է, քան ուրացումը: Նաեւ ժողովրդի լայն զանգուածներին աւանդում է, որ իրենց մանուկներին Աստծոյ երկիւղով սնուցեն, խրատեն, որպէսզի մանուկ հասակից լինեն աստուածասէր, ողորմած ու աղօթասէր, աղտոտ խօսքեր ու հայհոյանքներ չսովորեն, քանզի վաղ մանկական հասակում ծնողական խրատն աւելի անջնջելի յիշողութեամբ է դրոշմւում մանուկների մտքում: Բարիքների գլխաւորը համարելով սէրը՝ պահանջում է, որ բոլոր մարդիկ իրար հանդէպ սէր տածեն, իսկ աղքատների, մերկերի, հիւրերի, բանտարկեալների ու հիւանդների նկատմամբ՝ կարեկցութիւն եւ ողորմածութիւն, որպէսզի դրանց փոխարէն բարիքների վարձք ընդունեն Տիրոջից ու Յիսուս Քրիստոսով երկնային արքայութեան ժառանգորդ դառնան[34]:

*Թղթ*ի վերջում Շնորհալին իր խրատական խօսքն է ուղղում կանանց, նրանց պատուիրում ամէն ինչում պարկեշտ ու բարեձեւ լինել, ինչպէս վայել է քրիստոնեաներին, ոսկուց եւ արծաթից առաւել՝ իրենց անձերը ամօթխածութեամբ ու պատկառանքով զարդարեն, ներկերով չշպարեն իրենց դէմքը՝ անմիտ երիտասարդների համար մեղքի գայթակղութեան պատճառ դառնալով, սատանայական կախարդութեան եւ աղանդաւոր դեղատուութեան չհետեւեն, հեռու մնան այդպիսի մեծ ու աններելի չարիքներից, որպէսզի սատանայի հետ գեհենի հրին չդատապարտուեն, գործակից չլինեն սատանային՝ կախարդութեան չար գործերով եւ նրա հետ գեհենի հրում յաւիտեան չայրուեն, զգուշանան մեղքերից ու տարատեսակ չար գործերից: Շնորհալին խոստանում է աղաչել Տիրոջը, որ կանանց միջից հանի քարեղէն սիրտը եւ տայ մարմնեղէն սիրտ, որը արգաւանդ հող կը լինի ու կ'արդիւնաւորի Աստծոյ խօսքի սերմը նրանց հոգիներում եւ բազմապատիկ՝ մէկի փոխարէն հարիւր, կը պտղաբերի ու, նրանցով հանդերձ, աջակողմեանների հետ Յիսուս Քրիստոսով կը դասուեն յաւիտենական կեանքում[35]:

Ներսէս Շնորհալու՝ զինուորականութեանը, քաղաքաբնակներին, գիւղացիութեանը եւ կանանց ուղղուած յորդորների ու կանոնների յետագայ

---

[34] Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 158-60, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 119-21:

[35] Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 161-62, հմմտ.՝ Ս. Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 122-23:

զարգացմամբ բաւական մեծ թուով իրաւական ձեւակերպումներ կան Գօշի *Դատաստանագրքի*[36], ինչպէս նաեւ Սմբատ Սպարապետի *Դատաստանագրքի*[37] մի շարք գլուխներում ու յօդուածներում:

Շնորհալու *Թուղթը* ծրագրային փաստաթուղթ է համարուել եւ դարեր շարունակ ուղեկցել է հայ հոգեւորականութեան բազմաթիւ սերունդների: Երկն այնքան է կարեւորուել, որ 1268ին այն երկրորդ անգամ բազմացրել ու իր առաջնորդող նամակով Հայ Եկեղեցու բոլոր թեմերին է ուղարկել հայոց կաթողիկոս Յակոբ Ա. Կլայեցին (1268-86): Շնորհալու այս երկի նմանողութեամբ է գրուել Յովհաննէս Պլուզ Երզնկացու *Խրատ հասարակաց քրիստոնէից* երկը եւ նմանաբնոյթ այլ աշխատութիւններ[38]:

Այսպիսով՝ *Թուղթ ընդհանրական*ը բաղկացած է երկու հիմնական հատուածից, որոնցից առաջինն ուղղուած է հոգեւոր դասի, իսկ երկրորդը՝ աշխարհիկ դասի ներկայացուցիչներին: *Թուղթ ընդհանրական*ում Շնորհալին մատնանշում ու նշաւակում է հասարակական կեանքում դրսեւորուած անառողջ, յոռի բարքերը, մեղքերն ու արատները, ահազանգում դրանց վնասակար հետեւանքների մասին, իր ազդու խօսքն ուղղում հայ հասարակութեան բոլոր դասերի ու խաւերի ներկայացուցիչներին: Միաժամանակ, խորապէս մտահոգուած լինելով հասարակութեան առողջացմամբ, ականաւոր աստուածաբանը, մարդասէրն ու ազգանուէր գործիչը տալիս է այդ աղտերից ազատուելու դեղատոմսեր եւ ուղիներ: Շնորհալու յորդորները վերացական չեն, չունեն կեանքից ու իրականութիւնից կտրուած բնոյթ, այլ փաստարկւում ու հիմնաւորւում են որոշակի պատմական իրադարձութիւններով, սուրբգրային յղումներով ու առօրէական օրինակներով:

Այսպիսով՝ Շնորհալին հասարակութեան տարբեր դասերի ու խաւերի ներկայացուցիչների համար սահմանելով վարքագծի ու ապրելակերպի նորմեր՝ արգելքների ու խրատների միջոցով ձգտել է հայ հասարակութեան առողջացմանը: *Թուղթ ընդհանրական*ի կարեւորագոյն առանձնայատկութիւնն այն է, որ այն սոսկ հայ միջնադարեան ականաւոր մտածողներից մէկի գրական երկ կամ պատմաիրաւական փաստաթուղթ չէ, որում արտացոլուած են ժամանակի հասարակական համակեցութիւնը կարգաւորող բարոյախրատական յորդորներ ու ցուցումներ, իրաւական յարաբերութիւնների նորմեր, կամ ընդհանրապէս կիլիկեան հասարակութեան

---

[36] Գօշ, էջ 39-41, 44, 45-49, 54-56, 57, 80-84, 95-96, 103, 130, 146 եւ այլն:

[37] Սմբատ Սպարապետ, էջ 83-99, 103-104, 107-111, 117-142:

[38] *Սահմանադրական մշակոյթի արժէքանական ակունքները հայ ժողովրդի հազարամեայ գրաւոր գրութեան ծալքերում*, խմբ.՝ Գ. Յարութիւնեան, Ա. Մովսիսեան, Տ. Արարատ քահանայ Պողոսեան, Ս. Մելքոնեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Ս. Էջմիածին, 2020, էջ 315:

տարբեր դասերի ու խաւերի միջեւ իրաւայարաբերութիւններն ու փոխյարա-երութիւնները կարգաւորող նորմեր, այլ այն, որ Շնորհալու այս երկը հայոց կաթողիկոսի կողմից պաշտօնական միջավայրում՝ կաթողիկոսարանում, իրաւասու անձի՝ հոգեւոր բարձրագոյն դատարանը գլխաւորող, Մեծ դատաւորի գործառոյթներն իրականացնող պաշտօնեայի ստեղծած իրաւայայտ աղբիւր է, նորմատիւ փաստաթղթի արժէք ձեռք բերած պաշտօնական իրաւաբանական ակտի նշանակութեամբ՝ կանոնական իրաւունքին բնորոշ յորդորի, նախազգուշացման, արգելանքի, դատապարտման, պատժի ու յատուցման, թողութեան-ներման ձեւակերպումներով: *Թուղթ ընդհանրական*ում Շնորհալու առաջ քաշած առաջադիմական գաղափարները, յորդորներն ու արգելանքները, անշուշտ նաեւ գործնական նշանակութիւն եւ կիրառութիւն են ունեցել: Ըստ այդմ էլ՝ *Թուղթ ընդհանրական*ը ոչ միայն պատմական արժէքաւոր վաւերագիր ու գրական երկ է, այլեւ բարոյախրատական գործ է, իրաւագիտական յուշարձան, իրաւայայտ աղբիւր եւ նորմատիւ փաստաթղթի արժէք ձեռք բերած պաշտօնական իրաւաբանական ակտ, որն այսօր էլ չի կորցրել իր արդիականութիւնն ու աղբիւրագիտական արժէքը: Ուստի եւ ամէնեւին էլ պատահական չէ, որ *Թուղթ ընդհանրական*ում Շնորհալու առաջ քաշած առանցքային իրաւական գաղափարներն ու ձեւակերպումները դրուել են յետագայում ստեղծուած հայ ազգային դատաստանագրքերի հիմքում, իսկ *Թուղթ ընդհանրական* երկն էլ դարձել է հայ միջնադարեան իրաւական մտքի պատմութեան լաւագոյն աղբիւրներից մէկը:

AN OVERVIEW OF SAINT NERSES SHNORHALI'S GENERAL EPISTLE (*TOOGHT ENTHANRAGAN*) (SUMMARY)

ARMAN MANUK MALOYAN
armanmaloyan1976@gmail.com

The General Epistle (Encyclical letter) of Catholicos Nerses IV Shnorhali (1166-1173) occupies a unique place among the monuments of Armenian canonical (ecclesiastical) law. Spiritual and political figure of the 12th century, great thinker, teacher, poet and musician, Nerses Shnorhali is a prominent representative of Armenian culture. Shnorhali is the founder of a number of new directions in medieval Armenian lyricism and prose (story in verse, historical-patriotic mournful chant, historical poem, panegyric in verse, message and wish, children's poem, pedagogical and educational poem, riddle). The literary heritage of Nerses Shnorhali (*sharakan*s, *tagh*s, *gandz*s, *meghedi*, liturgies, as well as chants) is one of the peaks of Armenian spiritual literature; its significance goes beyond the scope of national monody art. It is not a surprise that already during his lifetime Nerses Shnorhali was named the Sweet Singer (*Ergetsokh*).

The prayer "I confess with faith" has a special place among the poetic works of Nerses Shnorhali, yet the pinnacle of his poetic legacy is the poem "Jesus the Son."

The works of Nerses Shnorhali are also rich in deep philosophical judgments. The pinnacle of Shnorhali's prose is the work "Conciliar (General) Epistle," which is the first kontakion of the newly ordained Armenian Catholicos Nerses IV Pahlavuni (1166), which was addressed to the entire Armenian nation.

The "General Epistle" ("Encyclical letter") consists of two main sections: the first is addressed to the clergy, and the second to the secular class. In it, addressing representatives of all classes and estates of Armenian society, Shnorhali pinpoints unhealthy relationships, arrogance, sins and vices manifested in public life, and warns about their harmful consequences. At the same time, deeply concerned with the restoration of society, Shnorhali, a prominent theologian, philanthropist and national figure, gives recipes and ways to get rid of these evils. Shnorhali's exhortations are not abstract, they are not detached from life and reality, but are argued and supported by specific historical events, biblical references and everyday examples.

Thus, by establishing norms of behavior and lifestyle for representatives of different estates and classes of society, Shnorhali tried to improve the health of Armenian society through prohibitions and exhortations. These also had practical significance and application.

In accordance with this, the "General Epistle" is not only a valuable historical document and literary work, but also a moral work, a source of knowledge of law, which has not lost its relevance and value in our days.